

ԲԱԺԻՆ 1.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆ ՈՒ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր Հայաստանի կառավարությունը պետական շինարարության գործընթացներն իրականացրել և իրականացնում է միջազգայնորեն ընդունված ժողովրդավարական սկզբունքների հիման վրա: Այդ սկզբունքներն ամրագրվել են 1995 թվականի ՀՀ Սահմանադրության մեջ, որոնք ներկայումս միտված են կատարելագործման սահմանադրական բարեփոխումների միջոցով: Ժողովրդավարական բարեփոխումների իրականացման ընթացքում Հայաստանի համար կողմնորոշիչ են միջազգային, մասնավորապես՝ եվրոպական արժեքները և չափանիշները:

2001 թվականի հունվարի 25-ին, դառնալով Եվրոպայի խորհրդի անդամ, Հայաստանը ստանձնել է որոշակի պարտավորություններ, այդ թվում՝ կապված ԵԽ մի շարք կոնվենցիաների վավերացման և ներպետական օրենսդրության բարեփոխման հետ: Եվրոպայի խորհուրդն արձանագրել է, որ ՀՀ իշխանություններն արդեն զգալի առաջընթաց են կատարել Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության համար իրավական հիմք ձևավորելու գործում, որն արտահայտվում է ինչպես ԵԽ համապատասխան կոնվենցիաների վավերացմամբ, այնպես էլ ներպետական իրավական դաշտը եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցմամբ: Այնուամենայնիվ, ՀՀ իշխանություններից դեռևս լրացուցիչ ջանքեր են պահանջվում ընթացող բարեփոխումները խթանելու համար՝ նկատի ունենալով, որ պարտավորությունների մի մասի կատարումը կախված է սահմանադրական բարեփոխումներից:

Մարդու իրավունքներ

Եվրոպայի խորհրդին անդամակցելուց ի վեր Հայաստանը վավերացրել է այնպիսի հիմնարար փաստաթղթեր, ինչպիսիք են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, Խոշտանգումների դեմ եվրոպական կոնվենցիան, Եվրոպական սոցիալական խարտիան, Տարածաշրջանային ու փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան: Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում եվրոպական չափորոշիչներ հաստատելու Հայաստանի անշեղ նպատակադրվածության մասին է վկայում նաև մահապատժի վերացման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ արձանագրության վավերացումը 2003 թվականին:

ԵԽ Խոշտանգումների դեմ պայքարի կոմիտեի ներկայացուցիչները ՀՀ ազատագարկման վայրեր կատարած այցելություններից ստացված տեղեկատվության հիման վրա 2004թ-ին մշակել ու ՀՀ իշխանություններ են ներկայացրել զեկույց՝ համապատասխան առաջարկություններով: Չեկույցում առանձնահատուկ կերպով շեշտվել է ՀՀ ոստիկանության համակարգում գտնվող ձերբակալված անձանց պահելու վայրերում և ոստիկանության բաժանմունքներում ոստիկանության աշխատակիցների կողմից ժամանակավոր անազատության մեջ պահվող անձանց հանդեպ վատ վերաբերմունքի և նույնիսկ կտտանքի բարձր հավանականությունը: Չեկույցում նշվել են նաև բանտերի գերծանրաբեռնվածության և ազատագրկվածների զբաղվածության ապահովման համար գործադրվող ոչ այնքան արդյունավետ ջանքերի մասին: Ներկայումս ՀՀ իշխանությունները բոլոր անհրաժեշտ միջոցներն են ձեռնարկում ազատագրկված անձանց պայմանները բարելավելու ու վատ վերաբերմունքի արժանանալու վտանգը նվազեցնելու ուղղությամբ՝ այս հարցում մեծ նշանակություն տալով ձերբակալված անձանց պահելու վայրերում ոստիկանության աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը: Նոր Քրեական օրենսգրքի ընդունումից հետո բանտերում գտնվող անձանց քանակը արդեն կրճատվել է:

Քանի որ ժողովրդավարական բարեփոխումների գործընթացի ներկայիս փուլում մարդու իրավունքների պաշտպանությունը ՀՀ կառավարության համար գերակա խնդիր է, 2004 թվականի մարտին Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ստեղծվել է ՀՀ կառավարության ներկայացուցչի ինստիտուտ: Ներկայացուցիչը լիազորված է դատարանում ներկայացնելու և պաշտպանելու քննվող գործով ՀՀ դիրքորոշումը:

Մարդու իրավունքների պաշտպանություն

Որպես մարդու իրավունքների պաշտպանության անկախ մարմին՝ Հայաստանում ձևավորվել է օմբուդսմենի ինստիտուտը, որի գործունեության համար իրավական հիմք է ծառայում 2003 թվականին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը: Քանի որ Սահմանադրությունը չէր ներառում ՀՀ ԱԺ կողմից մարդու իրավունքների պաշտպանի ընտրության մասին դրույթը, մինչև սահմանադրական բարեփոխումների ընդունումը, օրենքը, որպես անցումային լուծում, սահմանել էր, որ մարդու իրավունքների պաշտպանին նշանակում է ՀՀ Նախագահը՝ ՀՀ ԱԺ-ում ներկայացված խմբերի ու խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո: Արդյունքում 2004թ. փետրվարին նշանակվեց ՀՀ մարդու իրավունքների առաջին պաշտպանը, որի լիազորություններն ավարտվեցին 2006 թ-ի հունվարի 6-ին:

Սահմանադրության համաձայն, մարդու իրավունքների պաշտպանն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ 6 տարի ժամկետով, պատգամավորների ձայների առնվազն երեք հինգերորդով: Դրան համապատասխան, ՀՀ Ազգային ժողովը 2006թ. փետրվարի 17-ի արտահերթ նիստում ընտրել է մարդու իրավունքների նոր պաշտպան:

Սահմանադրական բարեփոխումներ

Հայաստանի կողմից սահմանադրական բարեփոխումների նախաձեռնությունը կապված է մի շարք ոլորտներում եվրոպական չափորոշիչների ներդրման հետ, ներառյալ՝ մարդու իրավունքների պաշտպանությունը, տարածքային կառավարումը, դատական համակարգը, որոնք պահանջում են գործող Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարել: Մշակվել և փորձագիտական գնահատական ստանալու նպատակով ԵԽ են ներկայացվել սահմանադրական բարեփոխումների 3 փաթեթ (մեկը՝ մշակված իշխող կոալիցիայի կողմից, մյուսները՝ խորհրդարանական խմբակցության և անհատ պատգամավորի կողմից): 2005 թվականի օգոստոսին ՀՀ ԱԺ-ն առաջին և երկրորդ, իսկ սեպտեմբերին՝ երրորդ ընթերցմամբ ընդունեց իշխող կոալիցիայի մշակած տարբերակը: Սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ հանրաքվեն կայացել է 2005 թվականի նոյեմբերի 27-ին, որի արդյունքում առաջարկված փոփոխություններն ընդունվել են: Սահմանադրությունն ուժի մեջ է մտել 2005 թ-ի դեկտեմբերի 5-ին:

Մտքի և խոսքի ազատություն

2004թ. գործում է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ նոր օրենքը: Որպես մտքի և խոսքի ազատության լիակատար ապահովմանն ուղղված քայլ՝ 2000 թվականին ընդունված «Հեռուստատեսության ու ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հիման վրա Հայաստանը իրականացրել է ազգային հեռուստատեսությունը հանրայինի վերափոխելու գործընթացը: Անկողմնակալության ապահովման նպատակով ստեղծվել են անկախ վարչական մարմիններ, որոնք ել դեկավարում են հանրային հեռուստատեսությունը և ռադիոն: Թեև որպես խնդրի անցումային լուծում՝ արդեն ձևավորվել են Հանրային հեռուստատեսության ու ռադիոյի խորհուրդն ու Հեռուստատեսության ու ռադիոյի ազգային հանձնաժողովը, այնուամենայնիվ, ՀՀ իշխանություններն ամրագրել են համապատասխան փոփոխություններ սահմանադրական բարեփոխումների մեջ, որոնց համաձայն պետք է ապահովվի հեռարձակող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը: Այդ նպատակով, ըստ սահմանադրական բարեփոխումների, ստեղծվելու է անկախ մարմին, որի անդամների կեսին ընտրելու է Ազգային ժողովը՝ 6 տարի ժամկետով:

Երթերի, ցույցերի ու միավորումների ազատություն

Որպես քաղաքական կյանքի գլխավոր սուբյեկտների՝ քաղաքական կուսակցությունների գործունեությունը կանոնակարգելու համար Հայաստանն ընդունել է «Կուսակցությունների մասին» օրենքը: Այնուամենայնիվ, դեռևս օրենքը վերացման ենթակա մի շարք թերություններ է պարունակում, կապված՝ հատկապես, կուսակցությունների լուծարման ու գրանցման մերժման հիմքերի հետ:

Հայաստանն ընդունել է նաև «Հասարակական կազմակերպությունների» և «Արհեստակցական միությունների մասին» օրենքները, որոնցով երաշխավորվում է միավորումների ազատությունը:

2004 թվականի ապրիլին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքը՝ մասամբ ներառելով Վենետիկի հանձնաժողովի

դիտողությունները: Սակայն այն դեռևս ուներ որոշակի թերություններ, որոնց վրա ժամանակին ուշադրություն էր հրավիրել Եվրոպայի խորհուրդը: Համաձայն միջազգային փորձագետների դիտողությունների՝ օրենքը խնդրահարույց է այնքանով, որ զանգվածային միջոցառումների անցկացման ազատության սահմանափակման չափանիշները չեն համապատասխանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանած չափանիշներին: Թերությունների վերացման ուղղությամբ համապատասխան աշխատանքներ են տարվել և 2005թ. սեպտեմբերի վերջին ՀՀ ԱԺ ընդունել է նշված օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը՝ հաշվի առնելով Վենետիկի հանձնաժողովի դիտողությունները:

Գենդերային քաղաքականություն

Մարդու իրավունքների և ազատությունների միջազգայնորեն ընդունված չափանիշների համատեքստում գնալով ավելի է մեծանում ուշադրությունը կանանց իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցում: Առավել ընդգրկուն ձևով կանանց իրավունքներին անդրադարձող միջազգային փաստաթուղթը «Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան է, որին Հայաստանը միացել է 1993 թվականին: Ավելին, Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է նաև Եվրոպական սոցիալական խարտիան, որը, անկախ սեռից, երաշխավորում է մարդկանց այնպիսի հիմնարար իրավունքներ, ինչպիսիք են բնակության, կրթության, առողջության, աշխատանքի, իրավական ու սոցիալական պաշտպանության իրավունքները և խտրականության արգելումը: Թեև պետական մարմինները և քաղաքացիական հասարակությունը մեծ ներդրում են ունեցել վերոնշյալ իրավունքների իրականացման գործում, դեռևս բազմաթիվ խնդիրներ լուծում են պահանջում՝ հաստատելու գենդերային լիակատար հավասարություն: Մասնավորապես, առանձնահատուկ ուշադրություն են պահանջում այնպիսի հարցեր, ինչպիսիք են կանանց ներկայացվածության աստիճանը իշխանության բոլոր ճյուղերում և ընդհանուր առմամբ քաղաքականության մեջ, նրանց մասնակցությունը բանկային ու ֆինանսական համակարգերի բարձրագույն մակարդակներում, միջին ու խոշոր բիզնեսում ձեռնարկատեր կանանց համար հավասար հնարավորությունների ստեղծումը և այլն:

Փոքրամասնությունների իրավունքներ

Եվրախորհրդի առջև ՀՀ ստանձնած պարտավորությունների շարքում, որպես ժողովրդավարական հասարակությանը բնորոշ հատկանիշ, Հայաստանը հանձն է առել բոլոր եկեղեցիների և հատկապես այսպես կոչված ոչ ավանդականների համար ապահովել իրենց դավանանքն իրականացնելու համար հավասար հնարավորություններ՝ բացառելով որևէ խտրականություն: Հայաստանի իշխանություններն այդ ուղղությամբ որոշակի գործունեություն են ծավալել: Այսպես, դավանանքի ազատությունը ներառվել է Սահմանադրության մեջ: Բացի այդ, այս հարցը սերտորեն կապված է Հայաստանի Հանրապետությունում այլընտրանքային զինձառայության հիմնախնդրի հետ, քանի որ «Եռվայի վկաներ» կրոնական կազմակերպության մի քանի ներկայացուցիչներ դատապարտվել են ազատագրկման՝ զինձառայությունից խուսափելու հիմունքներով: Իրավիճակը բարելավվել է 2004 թվականին՝ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որը կրոնական համոզմունքներով ծառայությունից խուսափող անձանց համար երաշխավորում է այլընտրանքային քաղաքացիական ծառայության անցնելու հնարավորություն: Ներկայումս ՀՀ իշխանություններն աշխատում են օրենքում դեռևս առկա՝ ԵԽ և ԵԱՀԿ փորձագետների կողմից մատնանշված թերությունների վերացման ուղղությամբ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է կրոնական հիմքերով ծառայությունից խուսափողների մույնականացմանը, նրանց կողմից իրականացվելիք աշխատանքների տեսակների հստակեցմանը:

Ինչ վերաբերում է ազգային փոքրամասնություններին, ապա Հայաստանը, գիտակցելով էթնիկ կոնֆլիկտներից չափազանց տուժած ժամանակակից աշխարհում հանդուրժողականություն ցուցաբերելու անհրաժեշտությունը, մեծ նշանակություն է տալիս այդ խնդրին: Ներկայումս ստեղծված է պետական կառույց՝ ՀՀ կառավարության աշխատակազմի Կրոնի և ազգային փոքրամասնությունների հարցերով վարչությունը, որի գործունեությունն ուղղված է նաև ազգային փոքրամասնությունների շահերի պաշտպանությանը: Ավելին, Հայաստանն արդեն ստորագրել և վավերացրել է Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան, որը միջազգային մակարդակով իրավական հիմք է ստեղծում փոքրամասնությունների իրավունքների հետևողական և պատասխանատու ձևով պաշտպանության համար: ՀՀ պետական բյուջեից միջոցներ են

տրամադրվել՝ փոքրամասնությունների համար կրթական ու մշակութային ծրագրեր կյանքի կոչելու նպատակով:

Տեղական ինքնակառավարման համակարգ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2002 թվականին, այնուհետև փոփոխվել՝ ԵԽ փորձագետների ներկայացրած առաջարկությունների հիման վրա: Տեղական ինքնակառավարման արդյունավետության և համայնքային ծառայողների պատասխանատվության բարձրացման նպատակով ընդունվել են նաև մի շարք այլ օրենսդրական ակտեր, որոնց մեջ կարևորվում է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը: Սահմանադրությամբ փոխվել է Երևանի կարգավիճակը. Երևանը այսուհետ ճանաչվում է համայնք, որի ղեկավարի ընտրության կարգը պետք է սահմանվի օրենքով: Միևնույն ժամանակ բարելավվել է համայնքների վարչական վերահսկողությունը, հնարավորություններ են ստեղծվել միջհամայնքային միավորներ ստեղծելու համար:

Դատական համակարգի բարեփոխումներ

ՀՀ դատական համակարգի կարևորագույն բարեփոխումների թվին են պատկանում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում ակնկալվող փոփոխությունները, որոնք բխում են Սահմանադրության համապատասխան դրույթների կատարման անհրաժեշտությունից՝ կապված, մասնավորապես, Սահմանադրական դատարան անհատական կարգով դիմելու իրավունքի տրամադրման հետ:

Դատական համակարգին առնչվում են նաև նի շարք այլ օրենքներ, որոնք պարբերաբար՝ պետական շինարարության պահանջներին համապատասխան, բարեփոխվում են: Այսպես, Հայաստանն ընդունել է դատական անկախությունն ամրապնդող 3 հիմնարար օրենք: Դրանք են՝ «Դատարանակազմության մասին», «Արդարադատության խորհրդի մասին» և «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքները: ՀՀ իշխանությունները հաստատակամ են ԵԽ փորձագետների առաջարկություններն ընդունելու հարցում՝ դատական համակարգում եվրոպական չափորոշիչներ հաստատելու նպատակով:

Ինչ վերաբերում է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքին, որն ընդունվել է 2005 թվականին, ապա այն լիովին համապատասխանում է ԵԽ չափանիշներին: Հայաստանը բարձր կգնահատի ԵԽ հետագա աջակցությունը նշված օրենքի գործնական կիրառման, ինչպես նաև այս ենթատեքստում Փաստաբանական էթիկայի կանոնների բարելավման հարցերում: Նախատեսվում է ընդունել «Փաստաբանների վարքագծի կանոնների մասին օրենք»:

Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարությունը շարունակում է «Արդարադատության բարձրագույն դպրոցի մասին» օրենքի նախագծի մշակումը: Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնելուց հետո նախատեսվում է օրինագիծը ներկայացնել ԵԽ լրացուցիչ փորձաքննության:

Անհրաժեշտ է նշել, որ ներկայումս աշխատանքներ են տարվում դատական համակարգին վերաբերող օրենքների նորացման ուղղությամբ, որի արդյունքում ըստ էության տեղի կունենա անցում դատական բարեփոխումների նոր փուլ: Այդ շրջանակներում մշակվում են «Դատական համակարգի մասին», «Արբիտրաժի մասին» օրենքների նախագծերը: Դատական բարեփոխումների երկրորդ փուլի 2006թ. գերակա խնդիրների մեջ են մտնում դատական համակարգի, քաղաքացիական դատավարության, վարչական դատավարության օրենսգրքերի մշակումը և վարչական դատարանների ստեղծումը:

Ընտրական համակարգ

Ժողովրդավարական ընտրությունների՝ որպես լեգիտիմ իշխանության ձևավորման համար անհրաժեշտ մեխանիզմի ապահովման համար Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել վերացնել նոր Ընտրական օրենսգրքում առկա թերությունները՝ կապված, մասնավորապես, ընտրական հանձնաժողովների ձևավորման և ընտրական ցուցակների կազմման համար պատասխանատու մարմինների աշխատանքի ընթացակարգային հարցերի հետ: Հաշվի առնելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և ԵԽ Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններն ու համատեղ կարծիքները՝ ՀՀ Ազգային ժողովը 2005 թվականի մայիսի 19-ին ընդունել է, իսկ ՀՀ Նախագահը հունիսի 7-ին ստորագրել է «Ընտրական

օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որն անդրադառնում է հիմնականում հետևյալ մի շարք հիմնախնդիրների՝

- ընտրությունների կազմակերպում, մասնավորապես, ընտրական ադմինիստրացիայի ձևավորում, ընտրացուցակների կազմում.
- ընտրաբշավ, թեկնածուներին առաջադրվող պայմաններ.
- ընտրվելու հնարավորությունների սահմանափակումներ.
- քվեարկության նախնական արդյունքների հրապարակման շարունակական թարմացում.
- վստահված անձանց, դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների պարտականություններ.
- ընտրություններին վերաբերող բողոքների և բողոքարկումների հաշվառման գործընթացներ:

Հակակոռուպցիոն միջոցառումներ

Ելնելով ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացման համար պետական լիազորված մարմինների գործունեության համադրման անհրաժեշտությունից, ինչպես նաև կոռուպցիայի առաջացման ու տարածման պատճառները վերացնելու, դրանց կանխարգելման ուղղությամբ տարվող քաղաքականությունը կատարելագործելու նպատակով, ՀՀ Նախագահի 01.06.2004թ. թիվ ՆՀ-100-Ն հրամանագրով կազմավորվել է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, որի կազմում են ՀՀ վարչապետը (Խորհրդի նախագահ), ՀՀ ԱԺ նախագահի տեղակալը (համաձայնությամբ), ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարը, ՀՀ արդարադատության նախարարը, ՀՀ Նախագահի խորհրդականը (Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի նախագահ), ՀՀ գլխավոր դատախազը (համաձայնությամբ), ՀՀ կենտրոնական բանկի նախագահը (համաձայնությամբ), ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահը (համաձայնությամբ), ՀՀ ԱԺ վերահսկիչ պալատի նախագահը (համաձայնությամբ) և ՀՀ Նախագահի աշխատակազմի վերահսկողական ծառայության ղեկավարը:

Խորհրդի հիմնական գործառնություններն են՝

- ա) համակարգել ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի միջոցառումների իրականացման աշխատանքները և իրականացնել դրանց մոնիտորինգը,
- բ) հաստատել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կազմը,
- գ) քննարկել հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի կողմից ներկայացրած առաջարկությունները,
- դ) համադրել համապատասխան լիազորություններով օժտված մարմինների գործունեությունը՝ կոռուպցիոն դրսևորումների կանխարգելմանն ուղղված միջոցառումների մշակման ընթացքում,
- ե) ձեռնարկել միջոցներ հակակոռուպցիոն ռազմավարությունից և միջազգային պարտավորություններից ու հանձնառություններից բխող՝ ՀՀ ստանձնած այլ պարտավորությունների կատարման ապահովման համար,
- զ) ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը,
- է) կազմակերպել և համակարգել ՀՀ գերատեսչական հակակոռուպցիոն ծրագրերի մշակման և իրականացման գործընթացը,
- ը) իր աշխատանքների արդյունքների վերաբերյալ յուրաքանչյուր կիսամյակ գեկույց ներկայացնել ՀՀ Նախագահին:

2003-2007թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրով նախատեսված էր իրականացնել 98 միջոցառում, որոնցից 2003-2004 թվականների ընթացքում լիարժեք կատարվել են 62-ը, մնացած 36-ը կատարման ընթացքի մեջ են:

Թեև ծրագիրը նախատեսված է մինչև 2007թ. ներառյալ, սակայն դա չի նշանակում, որ ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումով ավարտվելու է կոռուպցիայի դեմ պայքարը: Այն շարունակվելու է մշտապես՝ նպատակ ունենալով հնարավորինս նվազագույնի հասցնել բոլոր տեսակի կոռուպցիոն ռիսկերը:

Հայաստանը GRECO-ի (Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ) անդամ է դարձել 2004թ. հունվարին՝ և, համաձայն GRECO-ի գնահատման ընթացակարգերի, սահմանված ժամանակահատվածում պետք է ենթարկվի գնահատման: Համաձայն GRECO-ի Կանոնադրության՝ այդ խմբի նպատակն է բարելավել իր անդամների կոռուպցիայի դեմ պայքարի ներուժը՝ վերահսկելով պետությունների կողմից նշված ոլորտում ստանձնած պարտավորությունների կատարումը: Այսպիսով, այն հնարավորություն է ընձեռում հայտնաբերել կոռուպցիայի դեմ պայքարի գործում պետական մեխանիզմներում առկա թերությունները, ինչպես նաև խթանել անհրաժեշտ օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործնական բարեփոխումներն այս ոլորտում: